ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ղազարյան Արմինե Հրաչիկի /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 2

«31» օգոստոս 2023թ.

## ՔԿ/բ-045 - Դեղաբանության հիմունքներ-1 ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 053101.00.6 - Քիմիա
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 053101.02.6 - Դեղագործական քիմիա
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Քիմիայի բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** Քիմիայի և կենսաբանության
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** Առկա
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա 3-րդ կուրս, 5-րդ կիսամյակ

**Դասախոս(ներ)՝** Լոքյան Ա. Բ.
/

էլ. հասցե arevik.lokyan@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ........ 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները........ 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ........ 3
4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը........ 3
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների. ........ 4
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ........ 5
7. Ուսումնական աշխատանքների տեսակները ........ 5
8. Դասավանդման մեթոդներներ........ 7
9. Ուսումնառության մեթոդներ ........ 7
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը........ 8
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ........ 10
12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ........ 10
12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ ........ 11
12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ........ 13
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում........ 15
14. Գնահատում ........ 16
14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ........ 16
14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում........ 16
14.3. Հարցաշար ........ 17
14.4. Գնահատման չափանիշներ........ 19
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ........ 20

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում․**

**«Դեղաբանության հիմունքներ»** դասընթացը կարևորվում է կենսաբանության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է **«053101.02.6 – Դեղագործական քիմիա»** կրթական ծրագրի ուսումնական պլանի «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ» կրթամասում, որպես հիմնական դասընթաց:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

   **2.1.** Դասընթացի նպատակն է տալ գիտելիքներ դեղերի ծագման, դասակարգման,ստեղծման, դեղաչափման, ազդեցության մեխանիզմների, դեղի ներմուծման ուղիների,դեղերի զուգորդված ազդեցության ,արտազատման,կումուլյացիայի,օրգանիզմում դեղանյութերի փոխանակության, դեղերի դեղաբամնական խմբերիվերաբերյալ:

**2.2**Դասընթացի խնդիրն է ձևավորել հմտություններ և կարողություններ դեղանյութերի և դեղաչափի ընտրության վերաբերյալ, մասնագիտական գիտելիքներ գործանականում կիրառելու համար

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դ աս ը ն թ աց ն ե ր ը /** Տվյալ դասնթացն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է տիրապետի հետևյալ դասնթացներին՝ ընդհանուր Քիմիա ,Ֆիզիոլոգիա, Ախտաբանական ֆիզիոլոգիա ,Մարդու անատոմիա, Լատիներեն լեզու :

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1] և կոմպետենցիաները․**

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
- ինքնուրույն աշխատելու ունակություն
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

*Գիտենա*

- Դեղերի դասակարգումը, ազդեցության մեխանիզմը
- Դեղերի դեղաչափերը , փոխարինումները
- Դեղերի ներմուծման ուղիները
- Դեղերի կողմնակի ազդեցությունները
- Դեղերից առաջացած հնարավոր բարդությունները
- Դեղերի զուգորդված ազդեցությունները

*Կարողանա*

- Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում
- Կարողանա օգտվել Պետական ֆարմակոպեայից

[1] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

- Կարդալ դեղատոմսը
- Անհաժեշտ դեպքում կատարել դեղամիջոցի փոխարինում
- Անհաժեշտ դեպքում կազմակերպել առաջին մինչբժշկական օգնություն
- Անհաժեշտ դեպքում կատարել դեղամիջոցի նշանակում առանց բժշկի դեղատոմսի

*Տիրապետի*

- Կարողանա գիտական հարցերի վերբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ
- Տիրապետի Բժշկական էթիկայի կանոններին
- Տիրապետի Պետական Դեղագրքից օգտվելու կանոններին

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,
<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
<u>ԳԿ7</u> տարրական համակարգչային գիտելիքներ;
<u>ԳԿ8</u> տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),
<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,
<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
<u>ՀԳԿ2</u> հետազոտություններ կատարելու ունակություններ,
<u>ՀԳԿ3</u> սովորելու ունակություն,
<u>ՀԳԿ8</u> ինքնուրույն աշխատելու ունակություն,

<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

<u>ԱԿ2</u> հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
<u>ԱԿ4</u> ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
<u>ԱԿ6</u> կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
<u>ԱԿ9</u> դրսևորեն ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),
<u>ԱԿ11</u> տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
<u>ԱԿ14</u> տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

Դասընթացի ավարտին շրջանավարտը պետք է ունենա աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններ և հմտություններ: Պետք է

կարողանա հասկանալ դեղատոմսը, անհրաժեշտության դեպքում առանց բժշկի նշանակման տալ դեղ,խորհուրդ, կատարել առաջին մինչբժշկական օգնություն:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 4կրեդիտ/120 ժամ<br>5կրեդիտ/150 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 26 | |
| Գործնական աշխատանք | 20 | |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | 20 | |
| Ինքնուրույն աշխատանք | 84 | |
| **Ընդամենը** | 150 | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | քննություն | |

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**.
   - **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
   - **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն

առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:
- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

  Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- **<u>Ռեֆերատ</u>** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **<u>Գործարար խաղեր</u>** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **<u>Էսսե</u>** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **<u>Կլոր սեղան</u>** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **<u>Կոնկրետ իրավիճակների վերլուծություն</u>** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **<u>Նախագծերի մեթոդ</u>** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային

համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:

- ***<u>Հարցի նախապատրաստման մոդել</u>*** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **<u>Ինքնուրույն աշխատանք համացանցում</u>** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **<u>Աշխատանքային տետր</u>** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **<u>Զեկույց</u>** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- ***<u>Հարցազրույց</u>*** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար,* սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր․․․․

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում․․․․

**10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.**

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | Համառոտ ակնարկ դեղաբանության պատմությունից: Դեղանյութերի ազդեցության ընդհանուր օրինաչափությունները: Դոզա: Արտազատում: Կրկնվող ներմուծում: Զուգորդված ազդեցություն | 4 | | | 4 |
| 2. | Դեղաբանության պատմություն | | | | 4 |
| 3. | Նոր սերնդի դեղեր | | | | 4 |
| 4. | Քնաբեր դեղամիջոցներ | 2 | 2 | 2 | 4 |
| 3. | Ցավազրկող դեղամիջոցներ | 4 | 2 | 4 | 4 |
| 4 | Տեղային անզգայացնողներ | 2 | 2 | 2 | 4 |
| 5 | Միզամուղներ | 2 | 2 | 2 | 4 |
| 6 | Սեդատիվներ | | 4 | 4 | 4 |
| 7 | Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղամիջոցներ | 4 | 2 | 2 | 4 |
| 8 | Հակահիստամինային դեղամիջոցներ | 2 | | 2 | 4 |
| 9 | Անտիսեպտիկներ | 2 | 2 | 2 | 4 |
| 10 | Հակաբիոտիկներ | 6 | 4 | 6 | 4 |
| 11 | Նյութափոխանակության վրա ազդող դեղամիջոցներ | 4 | | | 4 |
| 12 | Հակացնցումային դեղամիջոցներ | 4 | | | 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Արյան համակարգի վրա ազդող դեղանյութեր | 4 | | 2 | 4 |
| 14 | Սիրտանոթային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ | 6 | 2 | 6 | 4 |
| 15 | Նյարդահակ դեղամիջոցներ | 6 | 2 | | 4 |
| 16 | Հոգեխթանիչներ | | 4 | | 4 |
| 17 | Վիտամիններ | | | 6 | 4 |
| 18 | Ալկոհոլ | | | | 4 |
| 19 | Արգանդամկանի վրա ազդող դեղեր | | | | 4 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 26 | 20 | 20 | 84 |

**11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Է. Ս.Գաբրիելյան Ֆարմակոլոգիա | 1992 |
| 2. | Ամրոյան Վ. Հակոբյան Ֆարմակոլոգիա | 1998 |
| 3. | Е. А.Фомина Справочник провизора консултанта | 2005 |
| 4. | Р. Г . Бороян Клиническая фармакологuая | 2006 |
| 5. | Харкевич Д.А. Фармакология с общей рецептурой2006 | 2006 |
| **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | | |
| 1. | Р. Г . Бороян , Э. А. Амроян , Э. С. Габриелян , В. П. Акопян Программированная фармакологuая | 2001 |
| 2. | Лакин К.М. Крилов, Фармакокинетика. | 2001 |
| **Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** | | |
| 1. | Վիդալ | |
| 2. | Համացանց | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն |
|---|---|---|---|---|
| | **1-ին կիսամյակ** | | | |
| **1.** | Համառոտ ակնարկ դեղաբանության պատմությունից: Դեղանյութերի ազդեցության ընդհանուր օրինաչափությունները: Դոզա: Արտազատում: Կրկնվող ներմուծում: Զուգորդված ազդեցություն | Դոզա, դեղանյութի ներմուծման ուղիներ, սիներգիզմ, անտագոնիզմ, կումուլյացիա, էլիմինացիա | 4 | ՊԳ 1,ՊԳ2 |
| **2.** | Քնաբեր դեղամիջոցներ | Քնաբերների ցուցում, հակացուցում,կողմնակի երևույթ թունավորում,դասակարգում, | 2 | ՊԳ 1, ՊԳ2 |
| **3.** | Ցավազրկող դեղամիջոցներ | Թմրաբեր և ոչ թմրաբեր անալգետիկներ, դասակարգում, ցուցում, հակացուցում, | 4 | ՊԳ 1 ՊԳ2 |
| **4.** | Տեղային անզգայացնողներ | Տեղային անզգայացնողների դասակարգում, ցուցում, հակացուցում, | 2 | ՊԳ 1 ՊԳ2 |
| **5.** | Միզամուղներ | Միզամուղների դասակարգում, ցուցում, հակացուցում, | 2 | ՊԳ 1, ՊԳ2 |
| **6.** | Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղամիջոցներ | Լեղամուղներ, լուծողականներ, անտացիդներ, հակախոցային դեղեր, ենթաստամոքսային գեղձի վրա ազդողներ | 4 | ՊԳ 1. ՊԳ2 |
| | **2-րդ կիսամյակ** | | | |
| **7.** | Հակահիստամինային դեղամիջոցներ | Ալերգիա, հալահիստամինային դեղերի դասակարգում, սերունդներ, ցուցումներ, | 2 | ՊԳ 1, ՊԳ2 |
| **8.** | Անտիսեպտիկներ | Անտիսեպտիկա և ասեպտիկա: Դասակարգում և նրանց առջև դրված պահանջները | 2 | ՊԳ 1. ՊԳ2 |
| **9.** | Հակաբիոտիկներ | հակաբիոտիկների կիրառման ոլորտները, | 6 | ՊԳ 1, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ազդեցության մեխանիզմները, խմբերը, | | ՊԳ2 |
| **10.** | Նյութափոխանակության վրա ազդող դեղամիջոցներ | Հորմոններ,Վահանաձև գողձի , ենթաստամոքսային գեղձի, մակուսդեղի,մակերիկամների հորմոնների վրա ազդող դեղեր | 4 | ՊԳ 1 ՊԳ3 |
| **11.** | Հակացնցումային դեղամիջոցներ | Էպիլեպսիա, պարկինսոնյան հիվանդության ժամանակ կիրառվ ող դեղեր | 4 | ՊԳ 1 ՊԳ3 |
| **12.** | Արյան համակարգի վրա ազդող դեղանյութեր | Էրիթրոպոեզի, լեյկոպոեզի,արյան մակարդելիության վրա ազդող դեղեր | 4 | ՊԳ 1 ՊԳ3 |
| **13.** | Սիրտանոթային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ | Հակաառիթմիկ, հակահեղձուկային, հակահիպերտենզիվ դեղեր , | 6 | ՊԳ 1 ՊԳ3 |
| **14.** | Նյարդահակ դեղամիջոցներ | Հակադեպրեսանտներ, հալյուցինոգեններ, անալեպտիկներ | 6 | ՊԳ 1, ՊԳ2 |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| | | **1-ին կիսամյակ** | | | |
| **1.** | Քնաբեր դեղամիջոցներ | Քնաբերրների բուժական կիրառությունները | 2 | հարցում | ՊԳ1,4,5 |
| **2.** | Ցավազրկող դեղամիջոցներ | Ցավազրկող դեղամիջոցների կիրառությունը | 2 | շնորհանդես | ՊԳ1,4,5 |
| **3.** | Տեղային անզգայացնողներ | Տեղային անզգայացման տեսակներըև դեղամիջոցները | 2 | Ռեֆերատ | ՊԳ1,3,5 |
| **4.** | Միզամուղներ | Միզամուղների ակտիվ և աջակցող կիրառությունները | 2 | շնորհանդես | ՊԳ1,3,2,Լ 1 |
| **5.** | Սեղատիվներ | Կատվախոտի պատրաստուկներ | 4 | շնորհանդես ,Բանավոր, գրավավոր և | ՊԳ1,4,3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | էլեկտրոնային ստուգում | |
| **6.** | Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղամիջոցներ | Փսխեցուցիչ, հակափսխեցուցիչդեղեր,ստամոքսի հյութազատությունը կարգավորողներ | 2 | Դեղագրքային աշխատանք, հարցում | ՊԳ1,4,2 |
| **2-րդ կիսամյակ** | | | | | |
| **7.** | Անտիսեպտիկներ | Հալոգեններ, սպիրտներ, ալդեհիդներ, ներկողներ, ծանր մետաղների աղեր | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,4,5Լ2 |
| **8.** | Հակաբիոտիկներ | Սուլֆոամիդներ, հասիֆիլիսային, հակատուբերկուլյոզային,հակամալարիային, հակաճիճվային, հակաամեոբիազային դեղեր | 4 | Ռեֆերատ, շնորհանդես, | ՊԳ1,4,3 |
| **9.** | Սիրտանոթային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ | Սրտային գլիկոզիդներ, հակաանգինալ, հակաառիթմիկ , հակահիպերտենզիվ դեղեր | 2 | Դեղագրքային աշխատանք, հարցում | ՊԳ2,4,5 |
| **10.** | Նյարդահակ դեղամիջոցներ | Հակադեպրեսանտներ, տրանկվիլիզատորներ, սեդատիվներ | 2 | Դեղագրքային աշխատանք | ՊԳ1,4,2 |
| **11.** | Հոգեխթանիչներ | Կոֆեին և նր կիրառությունները | 4 | շնորհանդես | ՊԳ1,4,3 |

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| h/h | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| **1-ին կիսամյակ** | | | | | |
| **1.** | Քնաբեր դեղամիջոցներ | Քնաբերների ազդեցության մեխանիզմ | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ2,3,2,Լ1 |
| **2.** | Ցավազրկող դեղամիջոցներ | Ցավազրկողների ազդեցության մնեխանիզմ | 4 | Դեղագրքային աշխատանք | ՊԳ4,3,2, |
| **3.** | Տեղային անզգայացնողներ | Տեղային անզգայացնողներիազդեցության մնեխանիզմ | 2 | ռեֆերատ | ՊԳ1,3,2, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **4.** | Միզամուղներ | Միզամուղների ազդեցության մնեխանիզմ | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,5,2,Լ1 |
| **5.** | Սեդատիվներ | Բրոմիդներ | 4 | շնորհանդես | ՊԳ1,4,2, |
| **6.** | Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղամիջոցներ | Բուսական լուծողականներ, ֆերմենտային պատրաստուկներ | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,3,2, |
| **2-րդ կիսամյակ** | | | | | |
| **7.** | Հակահիստամինային դեղամիջոցներ | Նոր սերընդի հակաալերգիկներ | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ5,3,2,Լ1 |
| **8.** | Անտիսեպտիկներ | Անտիսեպտիկների կիրառության ոլորտները | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,3,2, |
| **9.** | Հակաբիոտիկներ | Հակաբիոտիկների ազդեցության մեխանիզմ, կողմնակի երևույթներ | 6 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,3,2, |
| **10.** | Արյան համակարգի վրա ազդող դեղանյութեր | Սակավարյունության և լեյկոցիտոզի ժամանակ օգտագործվող դեղեր | 2 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ4,5,2,Լ1 |
| **11.** | Սիրտանոթային համակարգի վրա ազդող դեղամիջոցներ | Հակահիպերտենզիվներ, նոր սերնդի դեղեր | 6 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ2,3,25Լ1 |
| **12.** | Վիտամիններ | Վիտամինների կիրառումը, բիոավելցուկներ | 6 | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | ՊԳ1,3,2, |

## 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Դեղաբանության պատմություն | Զարգացման ստադիաներ | Ռեֆերատ | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 2. | Ամիրդովլաթ Ամասեացի | Գործունեությունը, աշխատությունները | Շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Անգիտաց Անպետ |
| 3. | Մխիթար Հերացի | Գործունեությունը, աշխատությունները | Շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Բժշկության պատմություն |
| 4. | Նոր սերնդի դեղեր | Նոր դեղերի ստեղծման դրդապատճառներ | Դեղագրքային աշխատանք | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր աղբյուրներից |
| 5. | Ալկոհոլ | Ալկոհոլի կիրառությունը դեղագործության մեջ | շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 6. | Արգանդամկանի վրա ազդող դեղեր | Կծկող և թուլացնող դեղեր | զեկույց, թեմայի վերլուծություն | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 7. | Վիտամիններ | Վիտամինանման նյութեր | զեկույց, թեմայի վերլուծություն | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 8. | Դեղերի բաղադրության մեջ մտնող ազդող նյութեր | Դաբաղանյութեր, եթերային յուղեր, սապոնիններ, սպիրտներ | զեկույց, թեմայի վերլուծություն, շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Դերերի բաղադրության մեջ մտնող օժանդակ նյութեր | Օժանդակ և օգնող միջոցներ | զեկույց, թեմայի վերլուծություն, շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Բանավոր, գրավավոր և էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 10. | Նյարդահակ դեղամիջոցներ | Ներոզներ, կիրառվող դեղերը | շնորհանդես | Կիսամյակի ընթացքում | Էլեկտրոնային ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 11. | Հակաուռուքային դեղամիջոցներ | Ուռուքների բուժման համար կիրառվող դեղեր | զեկույց | Կիսամյակի ընթացքում | Բանավոր ստուգում | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

**13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում**

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | Վիդալ,պետական ֆարմակոպեա |
| Սարքեր, սարքավորումներ | Ինտերակտիվ գրատախտակ, համակարգիչ |
| Համակարգչային ծրագրեր | Լաբորատոր աշխատանքների համար մեթոդական ցուցումներ |
| Այլ | |

**14. Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[2]:

**14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

**14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում**.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ և ստուգարքով:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[2]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

## 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Ալկոհոլներ
2. Ցավազրկող դեղամիջոցներ ,դասակարգումը
3. Թմրաբեր անալգետիկներ , մորֆին
4. Ոչ թմրաբեր անալգետիկներ .հակաբորբոքային ազդեցության մեխանիզմը , դեղամիջոցներ
5. Անալգետիկ ազդեցության և հակաջերմային ազդեցության մեխանիզմները , դեղամիջոցներ
6. Հակացնցումային դեղամիջոցներ
7. Հոգեհակ դեղամիջոցներ
8. ԳԱԿԹ -երգիկ դեղամիջոցներ
9. Հակադեպրեսանտներ , դասակարգումը
10. Հոգեխթանիչներ . կոֆեին,
11. Անալեպտիկ դեղամիջոցներ , դասակարգումը
12. Հալյուցինոգեններ ,դասակարգումը, ազդեցության մեխանիզմը
13. Սեդատիվ դեղամիջոցներ
14. Տեղային անզգայացնողներ , նրանց առջև դրված պահանջները
15. Սրտային համակարգի վրա ներգործող դեղամիջոցներ , սրտային անբավարարություն
16. Սրտային գլիկոզիդներ
17. Հակաառիթմիկ դեղամիջոցներ
18. Հկահեղձուկային դեղամիջոցներ , դասակագումը
19. Հակահիպերտենզիվ դեղամիջոցներ ,ջրա-աղային փոխանակության վրա ազդող դեղամիջոցներ
20. Հակահիպերտենզիվ դեղամիջոցներ. նյարդահակ դեղանյութեր, անոթային տոնուսն իջեցնող դեղանյութեր
21. Հակաաթերոսկլերոզային դեղամիջոցներ
22. Միզամուղ դեղանյութեր , ազդեցության մեխանիզմը
23. Միզամուղների դասակագումը, բուսական միզամուղներ
24. Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղանյութեր
25. Ստամոքսի հյութազատական գործունեությունը կանոնավորող դեղանյութեր
26. Խոցային հիվանդությունների բուժման համար օգտագործվող դեղանյութեր
27. Փսխեցուցիչ և հակափսխեցուցիչ դեղամիջոցներ
28. Լուծողական դեղամիջոցներ
29. Լեղամուղ դեղամիջոցներ
30. Արյան համակարգի վրա ազդող դեղանյութեր
31. Արյան մակարդելիության վրա ազդող դեղամիջոցներ
32. Լեյկոպոեզի վրա ազդող դեղամիջոցներ
33. Արգանդի վրա ազդող դեղամիջոցներ / դասակարգումը/
34. Նյութափոխանակության վրա ազդող միջոցներ , դասակարգումը
35. Հակամանրէային, հակապարազիտային և հակավիրուսային դեաղմիջոցներ
36. Հակաբիոտիկներ
37. Ցեֆալոսպորիններ
38. Ամինոգլիկոզիդներ
39. Տետրացիկլիններ
40. Մակրոլիդներ
41. Լնոմիցետինի խմբի դեղանյութեր
42. Ռիֆամպիցիններ
43. Հակասնկային հակաբիոտիկներ Հակաուռուցքային դեղամիջոցներ
44. Սուլֆոնամիդներ

45. Նիտրոֆուրանի ածանցյալներ
46. Հակապալարախտային դեղամիջոցներ
47. Հակասիֆիլիսային դեղամիջոցներ
48. հակապրոտոզային դեղամիջոցներ
49. Հակասնկային միջոցներ, դասակարգումը , համակարգային սնկային հիվանդությունները բուժող միջոցներ
50. Հակավիրուսային միջոցներ Հակաճիճվային դեղամիջոցներ

Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)
(1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի -------շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված թեմաները.**

1. Ցավազրկող դեղամիջոցներ
2. Սեդատիվ դեղամիջոցներ
3. ԳԱԿԹ -երգիկ դեղամիջոցներ
4. Հոգեխթանիչներ
5. Մարսողական համակարգի գործունեության վրա ազդող դեղանյութեր
6. Հակաաթերոսկլերոզային դեղամիջոցներ

- **Ընդգրկված հարցեր.**

1. ցավազրկողների դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
2. սեդատիվներ, կատվախոտի պատրաստուկներ, բրոմիդներ, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
3. նոոտրոպ դեղեր,դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
4. հոգեխթանիչներ, կոֆեին, թեոֆիլին, թեոբրոմին ,դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
5. լեղամուղներ, անտացիդներ, լուծողականներ, շարժողական ֆունկցիան կարգավորող դեղեր, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
6. խոլեստերին, հակախոլեստերինային դեղեր, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)
(2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի-------շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**
  1. Հակահիպերտենզիվ դեղեր
  2. Նյութափոխանակության վրա ազդող դեղեր
  3. հակադեպրեսանտներ
  4. Հակաբիոտիկներ
  5. հակահազային դեղեր
- **Ընդգրկված հարցեր.**
  1. հիպերտենզիա, հակահիպերտենզիվ դեղեր, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
  2. հորմոններ, վահանաձև գեղձի, մակերիկամների, ենթաստամոքսային գեղձի վրա ազդող դեղեր

3. դեպրեսիա, հակադեօրեսանտներ, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները
4. հակաբիոտիկներ, հակավիրուսային, հակաճիճվային, հակամալարիային, հականնկային, հակատուբերկուլոզային դեղեր, ցուցում , հակացուցում, դասակարգում
5. հակահազային դեղեր, դասակարգում, ազդեցության մեխանիզմ, կիրառման ոլորտներ, ցուցում, հակացուցում բարդությունները

## 14.4. Գնահատման չափանիշները.

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (վերանայված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 01.09.2023թ. https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf ),

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 053101.00.6 - Քիմիա

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 053101.02.6 - Դեղագործական քիմիա

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Քիմիայի բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4"><u>ՔԿ/բ-045 - Դեղաբանության հիմունքներ-1</u><br><u>ՔԿ/բ-046 - Դեղաբանության հիմունքներ-2</u></td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">4 կրեդիտ/5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">2–րդ կուրս 4-րդ կիսամյակ<br>3 –րդ կուրս 5-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">54/66</td><td>Դասախոսություն</td><td>26/26</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td>8/20</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>20/20</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">68/92</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">120/150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Ստուգարք/Միջանկյալ քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">նպատակն է տալ գիտելիքներ դեղերի ազդեցության մեխանիզմների, դեղի դոզավորման , դեղի ներմուծման ուղիների,դեղերի զուգորդված ազդեցության ,արտազատման, կումուլյացիայի ,օրգանիզմում դեղանյութերի փոխանակության, դեղանյութի ազդեցության տեսակների,օրգանիզմի անհատական առանձնահատկությունների նշանակության, դեղաբուժության հիմնական տեսակների , դեղերի վնասակար ազդեցությունների, տերատոգեն և մուտագեն ազդեցության մասին :</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք<ul><li>դեղերի աղդեցության ուղիներ, դոզա, էլիմինացիա, սիներգիզմ, անտագոնիզմ, կումուլյացիա,դեղերի դասակարգում ֆարմակոլոգիական խմբեր</li></ul>Հմտություն<ul><li>ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել</li><li>գործնականում,</li><li>որոշ գիտական հարցերի վերաբերյալ ինքնուրույն</li><li>եզրահանգումներ,</li><li>հանձնարարված գրականության հիման վրա կազմել</li><li>ռեֆերատներ:</li></ul>Կարողունակություն<ul><li>ստացած տեսական գիտելիքները կիրառել պրակտիկայում,</li><li>նախաձեռնություններ և հմտություններ ձեռք բերել</li><li>դեղագործության մասին գիտելիքները ըստ</li><li>անհրաժեշտության օգտագործելու համար,</li><li>թեմատիկ պլաններին համապատասխան տիրապետի</li><li>գրականության մշակմանը, տալով քննադատական</li><li>վերլուծություն:</li></ul></td></tr>
</table>

| | |
|---|---|
| **Դասընթացի բովանդակություն ը** | Թեմա 1 . Դեղերի ներմուծման ուղիներ<br>Թեմա 2. Տեղային անզգայացնողներ<br>Թեմա 3. Ցավազրկողներ<br>Թեմա 4. Միզամուղներ<br>Թեմա 5. Մարսողական համակարգի վրա ազդող դեղեր<br>Թեմա 6. Անտիսեպտիկներ<br>Թեմա 7. Անտիբիոտիկներ<br>Թեմա 8. Արյան համակարգի վրա ազդողներ<br>Թեմա 9. Նյարդահակ դեղեր<br>Թեմա 10.Սիրտ անոթային համակարգի վրա աղդող դեղեր<br>Թեմա 11.Վիտամիններ<br>Թեմա 12.Արյան համակարգի վրա ազդողներ |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Գնահատումը կատարվում է ըստ բուհում գործող «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (վերանայված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 01.09.2023թ.<br>https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf ), |
| **Գրականություն** | **Պարտադիր գրականություն**<br>1. Է. Ս.Գաբրիելյան Ֆարմակոլոգիա<br>2. Ամրոյան Վ. Հակոբյան Ֆարմակոլոգիա<br>3. Е. А.Фомина Справочник провизора консултанта<br>4. Р. Г . Бороян Клиническая фармакологиая<br>5. Харкевич Д.А. Фармакология с общей рецептурой2006 |
| | **Լրացուցիչ գրականություն**<br>1. Р. Г . Бороян , Э. А. Амроян , Э. С. Габриелян , В. П. Акопян Программированная фармакологиая<br>2. Лакин К.М. Крилов, Фармакокинетика. |